

գուն, ինչպէս լսել ենք, որդեգրել է պ. Ալեքսանդր Մանթաշեանը իսկ եթէ մի քանի մարդկանց կը յանձնվի կանոնաւորել Բաֆֆիի զբոսը վաճառման գործը, և եթէ շատ շուտով, դեռ նրա մահվան տպաւորութեան տակ կը հրատարակվեն նրա անցեալ աշխատութիւնները, և կը տպագրվեն նրա այն գրութիւնները, որոնք արդէն սպառված են, այն ժամանակ անկասկած կը գոյանայ այնպիսի մի պատկառելի գումար, որով միանգամայն կարելի է ապահովել Բաֆֆիի ամուսնու, տղիւն Մէլիք-Յակոբեանի վիճակը:

Բայց միթէ գրանով է վերջանում հասարակութեան պարտաւորութիւնը, որը արտասովոր ցաւակցութեամբ վերաբերվելով դէպի իր զբոսը մահը, և խորին վիշտ արտայայտելով նրա դաժաղի վրա, ցոյց է տալիս թէ ունի զիտակցութիւն և ինքնաճանաչութեան զգացմունք,— ահա մի կարեւոր հարց, որի մասին այժմ ամենքը պարտաւոր են մտածել, որի մասին իրանց հաշիւ պէտք է տան ամենքը: Բայց այդ մասին մի այլ անգամ կը խօսենք:

Խ. Մ.

ԲԱՅՑՅԻՒ ԴԱԳԱՂԻ ՎՐԱ ԴՐԱՆ ՊՍԱԿՆԵՐԸ

1) «Մշակի» խմբագրութիւնից մետաղեայ պսակ, սպիտակ ժապաւեններով, որոնց վրա գրած էր «Մշակի» կողմից Բաֆֆիին»: 2) «Արձագանքի» և «Փորձի» խմբագրութիւնից: 3) Վրաց «Իվլիա» լրագրի խմբագրութիւնից: 4) «Աղբիւրի» խմբագրութիւնից: 5) «Կրթ-Դարի» խմբագրութիւնից: 6) Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնից: 7) Հայուհեաց բարեգործական ընկերութիւնից: 8) Գրքեր հրատարակող ընկերութիւնից: 9) Հայ հեղինակներից: 10) Թիֆլիսի երկրասարգութիւնից: 11) Հայ ուսանողներից, ծաղիկ քնար, ժապաւենի վրա գրած՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»: 12) Մի խումբ երիտասարդներից: 13) Մի խումբ օրիւրդներից: 14) Մի ուրիշ խումբ օրիւրդներից: 15) Ներսիսեան դպրոցի աշակերտներից, մետաղեայ մեծ պըսակ, ժապաւենների վրա գրած՝ «Որ մահկանացու ծնալն, անմահ զիր յիշատակ եթող»: 16) Առաջին գիմնազիայի հայ աշակերտներից: 17) Երկրորդ գիմնազիայի հայ աշակերտներից: 18) Բէալական ուսումնարանի հայ աշակերտներից: 19) Տեխնիկական ուսումնարանի հայ աշակերտներից: 20) Արհեստաւորաց ուսումնարանի հայ աշակերտներից: 21) Այլագործական ուսումնարանի հայ աշակերտներից: 22) Օրիւրդաց գիմնազիայի հայ աշակերտուհիներից: 23) Հայ վարժուհիներից: 24) Բաֆֆիի սրտակից բարեկամներից: 25) Պան-

դուկտ տաճկաստանցիներից: 26) Արհեստաւորներից և մշակներից: 27) Թիֆլիսի հայ վաճառականներից: 28) Գլխաւորապէս փողոցի հայ գործաւորներից: 29) Ժողովրդական գրադարանի հրատարակողից: 30) Թիֆլիսի հեռագրատան հայ ծառայողներից: 31) Թիֆլիսի կենտրոնական գրաւաճառանոցից: 32) Թիֆլիսի հայ գրաշարներից: 33) Մարտիրոսեանի տպարանից: 34) Նախկին «Գործի» խմբագրից, լատինական հետեւակ մակագրութեամբ՝ «Non solum armis»: 35) Մարտիկի հայ զաղմկականութիւնից: 36) Արտապատկանի հայերից: 37) Թավրիզի հայ երիտասարդներից: 38) Բաֆֆիի հայրենակից սամառնոցիներից: 39) Թիֆլիսեանէկ Հին-Նախիջևանցի երկրասարգներից: 40) Բագուի հայ երիտասարդներից: 41) Բագուի Մարգարիտական ընկերութիւնից: 42) Բագուի օրիւրդներից: 43) Բագուի հայ մայրերից: 44) Բագուի հայ վաճառականներից: 45) Բագուի արհեստաւորներից: 46) Բագուից՝ Կարա-Մուրզայի երգեցիկ խմբից: 47) Բագուի հայոց դպրոցների ուսուցիչներից: 48) Բագուի ընկերական ուսումնարանի աշակերտներից: 49) Բագուի նաւթագործներից: 50) Երևանի հայ ժողովրդից, ժապաւենի վրա մակագրած՝ «Անմահանուն Բաֆֆիին»: 51) Ասորականի հայ հասարակութիւնից: 52) Ղարաբաղի երկրասարգութիւնից: 53) Յարիցիների հայ հասարակութիւնից: 54) Բաթումի հայ հասարակութիւնից: 55) Ախալցխայի հասարակութիւնից: 56) Երևանի երկրասարգներից: 57) Ղարսի հայոց ուսումնարաններից: 58) Ազուլիսի երկրասարգութիւնից: 59) Ղալարի հայ հասարակութիւնից, ժապաւենի վրա գրած՝ «Ոչ միայն զէնքով»: 60) Պետերբուրգի հայ ուսանողներից: 61) Մոսկուայի համալսարանի հայ ուսանողներից: 62) և 63) Խարկովի հայ ուսանողներից: 64) Լազարեան ձեռնարանի հայ ուսանողներից: 65) Սմաթո Շահադիլից իմ սիրելի վիպասանին՝ մակագրութեամբ:

Բայց այդ պսակներից, տաղանդաւոր զրոյի դաժաղի վրա գրած էին և ուրիշ շատ պսակներ գանազան մասնաւոր անձերից, հանգուցեալի ընտանիքի անդամներից, աշակերտներից, այնպէս որ պսակների ընդհանուր թիւը անցնում էր ութսուցին: Այդ պսակները զովեցան յատուկ պատգամաւորներ և ներկայացուցիչներ ձեռքով: Իսկ հանգուցեալի մահուն առիթով ստացված հեռագրերը, որոնք ուղարկված էին շատ տեղերից և ամեն տեսակ հիմնարկութիւններից ու դասակարգերից՝ շատ բազմաթիւ են:

սանել, Աստուած հնչում են Աստուած և այլն: Արեւոք գրանք չեն փոխած իրանց արտասանութիւնը, ի սկզբանէ այդպէս էին հնչում *): Հաւան էր դուք եթէ մենք՝ բնաստական հարց է առելով թողնել, որ այդ մարդեակները շարունակեն իրանց չփոխված հնչունքը: Եթէ դրանք յարատւ կրթութեան շնորհով և ճշգրտութեամբ ընդգրկելու փանքով կարողանում են փոխել զարդանքներով իրանց արտասանութիւնը, որ միայն ժամանակաւոր աղաւաղման հետեւանք էր, ինչու գլխի մեր օրդը, որ հնչում են բարի—բարի և դուրս—դուրս, այնպէս չը կարենան ուղղել ձեր արտասանութիւնը: Եթէ ոչ դուք, գլխի մեր սերունդը ապահով կերպով կարող է նոյն ուղղութիւնը իրագործելու վրան զի եթէ ձեր մանկեանց մեծագոյն մասը մտնում են զարդաց հարազատ արտասանութեամբ և աւարտում են արդէն աղաւաղում, չէր կարելի այժմ միթէ նոյնի հակառակը: Ուրեմն Վենոյ վերանորոգումը եղջերաւաքով մը չէ, քանի որ մենք ձեզ չենք առաջարկում օտար և հայի հնչական գործարանաց հակառակ արտասանութիւն, քանի որ սրանից մի դուր յառաջ հայոց ազգի մեծ մեծ մասն ու թիւնը, իսկ այժմ ամբողջ կենք՝ Միսրոպեան հարազատ, հետեւաբար բուն հայկական ուղիղ արտասանութիւնն ունէր և ունի:

Միւսիմարում է մեր գրագէտը Իսթիւնեանին այն ձախողութեան համար, «որ վերապահեալ է» նրա առաջարկութեան, նրանով, որ ինքն էլ ուղղել է երբեմն նորոգութիւն մուծանել հայ լեզուի մէջ, ուրիշ կողմից և չէ յաջողել (կը-երը ջնջել և գրել միայն տեսնեմ, կարգ ամ, փոխանակ

*) Լսեցէք, պ. Մ. Գարաբաշեան:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 26-ին Երէկ հեռագիրը մեզ ևս գուցէ մեր տաղանդաւոր և յարգելի վիպասան-Բաֆֆիի մահը: Երեւանի ամբողջ ընթերցող հասարակութիւնը սգի մէջ է, ողբում է նրա վաղաժամ մահը և ինչպէս չը ողբալ այդպիսի մի անխօսաբանելի կորուստ, ինչպէս չը ցաւել այն տաղանդի համար, որը վիպասան, պատմաբան և բանաստեղծ լինելուց բաց, լաւ պոէզիոստ ու առաջնորդ էր և օրի մահով հայ ազգը կորցնում է իր փայլուն աստղերից մէկին: Այդպիսի կորուստը զգալի է և զգալի է հայ սրտի համար:

Այստեղից այսօր երկու ցաւակցական հեռագրեր ուղարկվեցան «Մշակի» խմբագրութեանը, մէկը տեղիս գիմնազիայի հայ աշակերտներից, միւսն էլ գործակատարներից, իսկ ինտելիգենցիան պատուիրելու է մի պսակ դնել հանգուցեալի դաժաղի վրա և այստեղ հոգեհանգիստ կատարել: «Գնա մեծիւր արի սիրեմ» ասում է ժողովրդական առածը: Մեռու Բաֆֆի և ահա ամեն կողմից ցաւակցական հեռագրեր, պսակներ և ձառեր են ուղարկվում, այն ինչ նրա կենդանութեան ժամանակ դոնէ բարոյապէս խրախուսելու համար, ոչ մի այդպիսի ցոյց չեղաւ: Երևանի ինտելիգենցիան պատրաստուած է հոգեհանգիստ կատարել: այդ հանգամանքում մենք մեր համեստ առաջարկութիւնն ենք ուղղում անկէ Հանգուցեալի յիշատակը անջնջել անելու համար հաւաքել բաւականաչափ դրամ, որի տոկոսով ընդ մշտ մի որդեգիր պահել այստեղի թեմական դպրոցում հանգուցեալի անունով: Այսպիսով Երևանի ինտելիգենցիան ցոյց կը տայ թէ ինչքան ինքը պաշտում է հանգուցեալի տաղանդը:

Յայտնելով մեր խորին ցաւակցութիւնը այդ անխօսաբանելի կորստի համար, աւելացնում ենք. «Հանգիստ ուղիղներով, անխնայ մշակ, հանգիստ քեզ անդհանաւելի տաղանդ»:

Ամեն մի տաղանդ այն ժամանակ է երևան գալիս, երբ նրան օգնում են հանգամանքները և երբ նրա առաջ բացվում է գործելու ասպարէզ: Այդպիսի ասպարէզ բացվեց և հանգուցեալի առաջ վերջին ուսումնական պատերազմի ժամանակ, երբ «Իսկիւն» ահագին ջոկատի ընդունելու հետեւ Բաղրովի հետ լինելով հանգուցեալի վրա մի որ և է ստուեր գցելու մտքից, պէտք է խոստովանել, որ այդ ասպարէզը բացեց նրա առաջ «Մշակը», երբ ժամանակի ողու և ժողովրդի պահանջին համաձայն, ուղղութիւն տալով հանգուցեալի զրչին, տպագրում էր նրա վէպերը:

կը կարգ ամ, կը տեսնեմ և այլն) Չեր այդ նորոգութիւնը նմանում է պ. Միսրոպեան ջերմի նորոգութեան. *) ուստի պէտք չէք վրդովուիլ եթէ նա անյաջողութեան մատուցեալ: Մի երթաք ժողովուրդեան հակառակ Չենք կարծում թէ իմաստասիրական աղատ դաժափարներով տորդուած անձը արամբանական չը գտնէ մեր այս ասածը:

Պ. Եղիա Տէմիրճիպաշեան՝ ինչպէս վերե յիշեցինք, ընդունում է լուր և այլն պ. Իսթիւնեանի առաջարկութիւնը, բացի Պ. Փ. և Ա. տառերից: Բայց թէ ինչ նկատմամբ իր լեզուաբանական քննութեան բանաստեղծական վերջաբան է կցում —այդ մենք չը հակադասենք *):

*) Պ. Չերալդ հնարած է ընթերցանութիւն որով զլիսաւորաբար առաջարկում է ամեն սեռական իւրով վերջացնել, արքայութիւնի մարդիկ, կիւնի և այլն: Սրան հակառակ է դուգահեռաբար Հ. Ղ. և ուր զ. Յ. Յ. օրինակ են (վիշնայի Միսրոպեաններից) որ ամեն անհաստատութիւն բառնալու համար՝ գործածում է բոլոր նորոգութիւնը գրաբարի նման, աւուր, նովաւ, նովին, և այլն (սեւ իւր)՝ Փիլիսոփայութիւն կը օնի գիրքը):

*) Ահա այդ վերջաբանը. Ահ, (այս մահ կարծես անհրաժեշտ է) անբացատրելի յուզում մը կը համակէ սիրտս, ամեն անգամ, որ ինչմ հնդիկներն, իրենց երկիրն, իրենց լեզուն: Արիական արեւն կը զգամ երակներու մէջ, արիական արեւը լինի, արիական միլամոզմութիւն հոգւոյս մէջ: Կը լսեմ ահա (միթէ) ներքին ձայններ ներգաշնակ. վերջապէս դիւցազուն են, որը կ'օրհնեղեն, որը կ'ողբեղեն: Հեշտօրէն կը ծանրանան արտասանութեան և շրթներէս անեղութեան անձառադրեալ կաք ծարաւի՝ կը մրմնջեն Նիրվանա... Մենք ուրախ կը լինէինք, եթէ փոքր ինչ աւելի լուրջ լինէր պ. Տէմիրճիպաշեանի այդ ուր հարկն է: Բանաստեղծական զգացմանց պէտք չը կար այստեղ:

Եւ այսօր, երբ այդպիսի մի մեծ կորուստ ահագին զարկ է տալիս մեր, առանց այն էլ, աղքատ զրականութեանը, մահաւանդ ընթերցասիրկային, երբ ամբողջ հայութիւնը խորը սրտից ողբում է անխօսաբանելի տաղանդի կորուստը և և վերջապէս, երբ այդ դատարկ մնացած տեղը զգալի է ամեն մի ընթերցողի համար, պահանջ է զգացվում այդպիսի մի վիպասանի գոյութիւնը, և նոյն իսկ այսօր հարցվում է՝ ո՞վ պէտք է բուն հանգուցեալի տեղը, ո՞վ պէտք է լինի այն անձը, որ կարող լինի հայ ընթերցող հասարակութեանը բաւականութիւն տալ, և այն էլ այն ուղղութիւնով, ինչ ուղղութիւնով ընթանում էր հանգուցեալ և բոլորիցս յարգված Բաֆֆի:

Այս հանգամանքում ևս բոլորի աչքերը ուղղված են դէպի «Մշակը», որից միայն կարելի է սպասել՝ ասպարէզ բացել մեր՝ դեռ քնած և անյայտութեան դատապարտված ոյժերի և տաղանդների համար, որոնք կարող լինեն բուն այդպիսի աչքի ընկնող բաց տեղը:

Ս. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Ստացանք ԲԱՅՑԻՒՅ հետեւալ նամակը պ. Ներսէս Արեւանցի ստորագրութեամբ: «Բագուի երկրասարգութիւնը վճռել է աւելի իրական ձեւով պատուել մեր սիրելի Բաֆֆիի յիշատակը. երկրասարգների շրջանի նախաձեռնութեամբ ստորագրութիւն է բացվելու դրամական նուիրատուութիւններ ժողովելու նպատակով: Հանգանակված գումարը պիտի գործադրվի լոյս ընծայելու բազմաշխատ գրողի (ա) անտիպ, (բ) տպված, բայց սպառված և (գ) զանազան պարբերական թերթներում ցրված աշխատութիւնները: Այս ձեռքով ծառայութիւն արած կը լինենք թէ հանգուցեալի որբացած ընտանիքին, և թէ իր նշանաւոր աշխատաւորից զրկված հայոց դրականութեանը: Յայտնելով այս մասին, մեզ ցանկալի էր, որ բագուցիների ձեռնարկութեամբ՝ արձագանք գտնէր ամեն տեղի հայ հասարակութեան մէջ և որ զըժխաւորն է՝ կազմակերպվէր մի անօրէն կենտրոնական յանձնաժողով, որին կարելի լինէր ուղղել դաւաճներում հաւաքվելի գումարները և որը հոգար տպագրութեան նիւթական և գրական կողմի մասին»:

Ապրիլի 28-ին վախճանեցաւ ՄՕՍԿԱՅԻՍ ԵՐԱՅԻ ԳՈՒՄԻՆԵԱ ՍՆԱՆԵԱՆ միլիտանտները: Նա ծնվեց Թիֆլիսում և երկրասարգ ժամանակ, ունենալով զրպանում 150 բուրլի, ուղեորովեց Մոսկվա, որտեղ մտաւ որպէս գործակատար մի հայ

«Արեւել» իր մարտի 25-ի համարում հրատարակած է Հռոմից ուղղած մի յօդուած, որ անշուշտ տաճկահայերից շատերի ճաշակին համաձայն է դրուած, թարգման լինելով նոյա զգացմանց: Գոգուածի հեղինակն է տ. Գով. վարդապետ Միսրոպեան, ուսուցիչ հայերէն լեզուի Հռոմի հայկազնեան (Լեոնեան) վարժարանում (կօլէժ): Այս անձը ծանօթ է արդէն իբրեւ նախկին քարտուղար Վ. Պոլսոյ կաթողիկ հայոց կաթողիկոսարանի, իբրեւ «Գրիգորեան» և Գուգեան տօմարների վրա խորհրդածող և իբրեւ առձեռն լատին-հայ. բառարանի հեղինակ: Չէինք կարող երեւակայել սակայն թէ սա կը համարձակէր այն աստիճան խեղճութիւնը փաստերն, որ իր ընթերցողները ապշովեան մէջ մնացին թէ նոր պատգամ է որ խոսում է մեզ: Գ. Միսրոպեան ճիշդ է թախում ապացուցանել թէ կրող կրող չէ, այլ բառակուսի, աշխատում է համոզել թէ հայկական տառերը սխալ հնչող են երբ մենք ենք և ոչ թէ իրենք և այս նպատակին հասնելու համար, կասկած է սփռում Միսրոպեան տառադարձութեան հարադատութեան և ճշգրտութեան վրա, ինչպէս ստորեւ կը տեսնենք: Մեծ քաջութիւն. և ինչու այսպիսի քաջութիւն մենք մեր կօլէժից վարդապետների վրա ենք տեսնում միշտ: Բայց ինչպէս է համոզում նա այդ վճռական եղբայրակցութեան: Նա համոզում է իր սեպական տրամաբանութեամբ, որն ամենիս յատուկ չէ:

(Կը շարունակվի)

վաճառականի մօտ Հեղինակի աշխատելով և փոքրիկ դիմելով նա ընկերացաւ հարուստ վաճառականների և կապալառուների հետ և վերջապէս հասցրեց իր կարողութիւնը միլիոններէ Աստուծոյ հետ, որ հանգուցեալը Մովսէսի հայ ուսանողներին ներկայացաւ օգնութեամբ էր, բացի սրանից յայտնի է, որ թիֆլիսում նրա հաշուով հիմնվեցաւ Անանիան-Մարիամեան հայոց իգական դպրոցը:

Մենք հաղորդեցինք արդէն, որ հանգուցեալ Ռաֆֆիի որդիներանցից մէկը յանձն առաւ իր հաշուով կրթելու փոթիում ծառայող զինուորական Ալեքսանդր Մէլիք-Հայկազեան Աթոյ լուր կայ, որ հանգուցեալի միւս որդուն յանձն է առնում իր հաշուով ուսում տալու թիֆլիսեան Ալեքսանդր Մանթաշեան յայտնի հարուստը Բացի սրանից թիֆլիսի Ներսիսեան հոգևոր թեմական դպրոցի հոգաբարձութիւնն էլ առաջարկել է Ռաֆֆիի որդիներանցից մէկին որդեգիր վերցնել զըստ իր հաշուով:

Անդրկովկասեան հայաբնակ շատ քաղաքներում, ինչպէս մեզ գրում են, այս օրերս կատարվել են և կատարվելու են հոգեհանգիստներ հանգուցեալ Ռաֆֆիի յիշատակին:

Լուսն ևնք, որ Եւփածինից յատուկ յանձնարարութիւններով թիֆլիս են եկել պ. Սեդրակ Մանդինեան և Մամբրէ եպիսկոպոս Սանասարեան, երկուսի համար էլ Եւփածինից ստացված կարգադրութեան համաձայն՝ ընտելացան և պատարաստված Ներսիսեան դպրոցում, ուր դեռ ևս ուսումը շարունակվում է: Ասում են, որ պ. Մանդինեան պէտք է ծանօթանայ Ներսիսեան դպրոցի ուսումնական մասի հետ, ներկայ լինելով քրիստոնէութիւններին, իսկ Սանասարեան եպիսկոպոսի գլուխ կապ ունի թէ թեմական գործերի և թէ ֆամայից եկեղեցու երեցիների հարցի հետ: Պ. Սեդրակ Մանդինեան Եւփածինի ճեմարանի ուսուցիչ է, իսկ Սանասարեան եպիսկոպոսը թիֆլիսեան լաւ ծանօթ Մամբրէ վարդապետն է, որ մի քանի տարի առաջ թիֆլիսի կոնսիստորիայի նախագահի պաշտօն էր վարում:

ՍՂԱՆԱԻՅ մեզ գրում են: «Մինչև ասպիւլի 25 մեզ մօտ եղանակները շատ լաւ էին, բայց այդ օրից յետոյ Սղնախը մատախուղով ծածկվեցաւ և երեք օր շարունակ անձրև էր տեղում»:

ԵՐԵՒԱՆԻՅ մեզ գրում են ասպիւլի 26-ից հետեան: «Երկու օր սրանից առաջ մի թուրք փորձել էր բէյլիկում սպանել մի լապտեր-վառողին, բայց բարեգործաբար թեմական կերպով վերադարձել էր օտարից»:

ԵՐԵՒԱՆԻՅ մեզ գրում են: «Մայիսի 3-ին այստեղի նահանգական դատարանում նշանակված է կեղծ 25-օրուրանոց թղթադրամներ շինողներին և միստրների գործի ճնշութիւնը»:

Մեզ գրում են, որ ԱՄԱՐԱՌՈՒՄ զետեղված հայ նորակոչ զինուորների բանակը ամառը տեղափոխվելու է Քանաքեռ գիւղը: Բայց լուր կայ, որ Քանաքեռում զօրանոց է շինվելու նոյն զինուորների համար, որպէս զի նրանց բանակատեղին մշտապէս մնայ Քանաքեռում:

ԿԱՐՍԻՅ պ. Երուսաղէմ Ղազարեանց խնդրում է մեզ յայտնել, որ վաղուց է արդէն թարգմանած ունի հայերէն լեզուով Տուրքէնէվի «Накаму» վէպը և յոյս ունի շուտով տպագրելու այդ վէպը:

«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ քաղաքացիական վարչութեան պաշտօնեաների համար գոյութիւն ունեցող թօշակի արկղի վերաբերմամբ մշակված նոր կանոնադրութիւնը կը քննվի պետական խորհրդում աշան սեփայլում, այնպէս որ նոր հիմունքների վրա հիմնվելի թօշակի արկղը կը բացվի միայն 1889 թ-ից:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի Ներսիսեան դպրոցի վեցերորդ դաստան վերջնական քննութիւնները այս օրերս սկսվել են:

«Русск. Поломникъ» կրօնական լրագրի պատկերով Երուսաղէմի շրջակայքում մի հայ վարդապետ, մեծ Աղանեան, ընդունել է կաթոլիկութիւնը:

պատճառ բերելով այն, որ կաթոլիկներն են միայն ճշմարիտ քրիստոնէայ, որովհետեւ Աստուծոյ խօսքը քարոզում են մարդակերների, կռապաշտների և վայրենիների մէջ: Հայ վարդապետին հետեւել է և մէկ յոյն կրօնաւոր: Արդեօք հայ վարդապետին ձանձրացրեց իր ծոյլ, ինչ որ կաննքը, թէ այդտեղ կայ մի ուրիշ պատճառ:

Կ. Պոլսից մի մասնաւոր նամակով ասպիւլի 23-ից մեզ գրում են, որ Սուլթանը չի ընդունի Թարութիւն պատրիարքի հրաժարականը:

Պ. Ֆորլատտիի խումբը արդէն եօթն անգամ ներկայացրեց «Աշխարհիս շուրջը 80 օրվայ մէջ» ֆէլէրիան, և համարեա ամեն անգամ թատրոնը լի էր լինում. նա մտադրութիւն ունի դեռ էլի մի քանի անգամ կրկնել այդ ներկայացումը: Այսօր նոյն խումբը պէտք է ներկայացնի «Վոլքերէի սպանումը» պիեսին:

Ռուս տուրիստ-վիպագրող Նէմիրովիչ-Կանչէնկօ «Русскія Вѣдомости» լրագրում խօսելով հայերի մասին, համակրանքով է վերաբերվում զէպի հայերը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԵՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ Պետերբուրգից հետեան:

«Правит. Вѣстн.» լրագրում տպված է մի հաղորդագրութիւն իրիւ պատասխան «Нов. Время» լրագրում Տաթիչեվի ստորագրութեամբ «Ռուսաստան և Բուլղարիա» վերնագրով տպված յօդուածներին: Թաղնելով այն շարժառիթները, որոնք զրոյցն Տաթիչեվին գրել իր յօդուածները, «Правит. Вѣстн.» լրագրի յօդուածը ասում է, որ դեռ ևս անհնարին է անկողմնապահութեամբ գործնապես բոլոր քաղաքական երեւոյթները, որոնք վերաբերվում են Բուլղարիային՝ թէ նիւթերի պատկանութեան և թէ ներկայ քաղաքական վիճակի հետ սերտ կապ ունեցող անցքերի պատճառով: Այդ պատճառներով Տաթիչեվի կարծիքները ռուս գործիչների մասին Բուլղարիայում անհիմն են երեւում, և նրա մեղադրանքները ռուս կառավարութեան ներկայացուցիչներին դէմ Բուլղարիայում մտերմութեամբ են հասարակաց կարծիքը և քաղաքական են Ռուսաստանի հակառակորդներին՝ օգուտ քաղելու ռուս ստորկիցիստի մտքերից ներկայ քաղաքական դրութեան պատասխանաւորութիւնը կայսերական կառավարութեան վրա բարձրեալ համար: Լրագիրն ասում է, որ ռուս կառավարութեան բոլոր ներկայացուցիչները մի և նոյն սկզբունքներին էին հետեւում և միակերպ հոգում էին Բուլղարիայի բարօրութեան մասին, պաշտպանելով երկրի մէջ ուղղափառ եկեղեցու գոյութիւնը, որին Բուլղարները պարտական են իրանց ազգային գոյութեամբ ստրկութեան դարձումը, մի և նոյն ժամանակ պահպանելով բարոյականութիւնը զըստ իրոցների մէջ, կարգապահութիւնը գործի մէջ և վերջապէս ինչպէս երկրի նիւթական միջոցները:

Այդ սկզբունքները պահպանվում էին, որչափ թոյլ էր տալիս նրանց պահպանելու Բուլղարիային չնորսված ներքին վարչութեան անկախութիւնը: Իսկ ինչ որ վերաբերվում է ռուս ներկայացուցիչների յարաբերութիւններին դէպի Բուլղարիայի առանձին անձնաւորութիւնները և կուսակցութիւնները, այդ յարաբերութիւնները չէին կարող չենթարկվել անընդհատ տատանումներին, զլիաւորապէս այն պատճառով, որ Բուլղարիան չափից դուրս արագ կերպով անցաւ կատարակ ստրկութեան դրութիւնից դէպի սահմանադրական կառավարական ձեւը: Այդ տեսակ յանկարծակի փոփոխութեան շնորհով երկրի քաղաքական կրթերը շատ վաղ դարձելով և անհաստատ հիմքերի վրա դնելով երկրի պետական կեանքը, մի և նոյն ժամանակ արգելեւ եղան Բուլղարացի գործիչներին պատահութեամբ և անկողմնապահութեամբ վերաբերվելու դէպի կայսերական կառավարութեան բարի գիտաւորութիւններն ու ցանկութիւնները: Նոյն իսկ այդ ցաւալի երեւոյթները պատճառ եղան, որ Բուլղարիայի յարաբերութիւնները դէպի Ռուսաստանը հետզհետէ վատացան, որի հետեւանքն այն եղաւ, որ կայսերական կառավարութիւնը նախապաշտելուց յետ կանչել իր ներկայացուցիչներին Բուլղարիայից, յուսալով որ ժամանակը և փորձաքանկան գործիչներին ձանաչել իրանց, որ կախված էր իրանից, որպէս զի հեշտացնի Բուլղարներին վերադառնալու օրինակները Բուլղարական ձանապարհի վրա, և վերահաստատելու Ռուսաստանի հետ ընդհանր յարաբերութիւնները: Բուլղարիայի և Ռուսաստանի անհիմնական յարաբերութիւնները և իրանց կախվածութիւնը իրանից, որպէս զի հեշտացնի Բուլղարներին վերադառնալու օրինակները Բուլղարական ձանապարհի վրա, և վերահաստատելու Ռուսաստանի հետ ընդհանր յարաբերութիւնները: Բուլղարիայի և Ռուսաստանի անհիմնական յարաբերութիւնները և իրանց կախվածութիւնը իրանից, որպէս զի հեշտացնի Բուլղարներին վերադառնալու օրինակները Բուլղարական ձանապարհի վրա, և վերահաստատելու Ռուսաստանի հետ ընդհանր յարաբերութիւնները:

ցուցիչներին Բուլղարիայից, յուսալով որ ժամանակը և փորձաքանկան գործիչներին ձանաչել իրանց, որ կախված էր իրանից, որպէս զի հեշտացնի Բուլղարներին վերադառնալու օրինակները Բուլղարական ձանապարհի վրա, և վերահաստատելու Ռուսաստանի հետ ընդհանր յարաբերութիւնները: Բուլղարիայի և Ռուսաստանի անհիմնական յարաբերութիւնները և իրանց կախվածութիւնը իրանից, որպէս զի հեշտացնի Բուլղարներին վերադառնալու օրինակները Բուլղարական ձանապարհի վրա, և վերահաստատելու Ռուսաստանի հետ ընդհանր յարաբերութիւնները:

ՏԵՐԵՎՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

Ինչպէս յայտնի է, Թարութիւն պատրիարքի հրաժարվելու և Երուսաղէմ գնալու խնդիրը այսօր հերթական խնդիրն է Պոլսում, ուր այժմ խօսք կայ այն մասին, թէ ի՞նչ պէտք է լինի նրա յաջորդը, կամ զի՞ք նրա ժամանակաւոր տեղապահը: Այդ առիթով Պոլսից մեզ գրում են հետեանքը ասպիւլի 12-ից:

«Տեղապահի ընտրութեան մասին կարծիքներու զանազանութիւն կայ: Երկու խնդիր կը ներկայանայ, պէտք է որ ժամանակ մը տեղապահով կառավարվին և յետոյ Պատրիարք ընտրենք, թէ չէ մի քանի շարժի տեղապահ ունենանք և այնտեղեւտ անմիջապէս Պատրիարք ընտրենք: Եթէ առաջին կարծիքն ընդունելու իմանք, այն ատեն գործունէաց և կարող եպիսկոպոս մը տեղապահ պիտի ընտրուի, իսկ եթէ նախապատուութիւն տրուի երկրորդ կարծիքը, այն ատեն պիտի ընտրուի ու և մի եպիսկոպոս, որ ուրիշ գործ չը պիտի ունենայ ընդելք, բայց եթէ պատրիարքական ընտրութիւնը կատարել տալ: Բայց ասոնց մէջ երկրորդ կարծիք մը ևս կը բարձրանայ: Այդ կարծիքը ունեցողները կըսեն թէ՛ ինչ որ ալ լինի պէտք է անպատճառ տեղապահ ընտրել կարող եպիսկոպոս մը, այնպիսի եպիսկոպոս մը, որ կարենայ իւր կարողութեան չափը տալ տեղապահութեան միջոցին և եթէ գոհացուցիչ կերպով ընէ տեղապահութիւնը դեռ ընտրենք Պատրիարք: Եւ եթէ այս վերջին կարծիքը արդարեւ յաղթէ, հաւանական կերեւի խորին Նար-Պէյ սրբազանի տեղապահութիւնը: Բայց այս ամենուն վրայ քիչ շատ վատաճութեամբ խօսելու համար գուցէ պէտք է որ ժամանակ մը սպասենք: Ո՞րքե՞ն թերեւ ամիսներ ուշանայ այս ամենը»:

Պոլսից մեզ գրում են, որ Ազգային ժողովը իր վերջին նիստերից մէկում վերջնական կերպով վաւերացրեց Սովետոյ Բանաճառագրով տեղեկագիրը:

Մուշից գրում են հետեանքը «Արեւելք» լրագրին. «Գրամական տաղանայի և աղքատութեան երեսն տակաւ առ տակաւ երկարգործ հայերը ձեռքը կը հանեն իրենց հողային կալուածները, այն բարեբեր հողերը, որոց հետ աշխատել և իրենց կեանքն անցուցել են մեր հողագործ նախնիք, այսօր կը գտնուին բաւական թուով հայաբնակ գիւղեր՝ յորս ընտելեալ հայոց դասին երկուսն կամ երեքն հողիւ ունին հող, մնացեալը ծախած են, և ասոնց շարքին մէջն է խորոնք կամ խորնի, խորենացիին գիւղը: Գրամի տոկոսն արտասովոր եղանակաւ բարձրացած է այս կողմերն և աղքատ ժողովուրդը ծանրաբեռնեալ տոկոսներու ներքեւ Աղքատութիւնն ու մեղկութիւնն հերկը չէին գիւղացոյց, այս տարի երաշտութեան երեսէ հացի գինը սովորականէն եռապատիկ բարձրացաւ: Եթէ յառաջիկայ դարուն հունձեքը գոհացուցիչ չը լինի, աղէտալի է հողագործին վիճակը: Թէ Մշոյ դասին և թէ Պուլանիցի բոլոր արմտիք վաճառականաց ձեռքն են, և հետեւաբար հետզհետէ հացն աւելի պիտի թանգանայ: Ի Պուլանից անասնոց հիւանդութիւնն ալ երեսն ելեր է»:

Հաճնից տեղական առաջնորդը ասպիւլի 12-ից հեռագրում է Կ. Պոլսի հետեանքը. «Հաճնոյ ազգայինք անթոթութիւն բոլորովին թշուառութեան մատուցեան: Անկարելի է առաջն առնուլ անթոթութեան պատճառով կրօնափոխութեան գիմարներուն: Ասոնց դեռ նպատակ մը չեղաւ»:

Կ. Պոլսից մեզ գրում են հետեանքը. «Թարութիւն

Պատրիարքի Երուսաղէմի պատրիարքութեան մօտ պաթիւն ամբողջ ազգ. երեսփոխաններէ ստորագրուած լինելով, ասպիւլի 13-ին, երեքարթի օր, Թարութիւն Պատրիարք ընկերակցութեամբ Սիմօն պէյ Մագստոսեանի դնաց դատական գործոց նախարար ձեւվել փաշայի և մազպաթան յանձնք նրմա, ինչպէս նաև Պոլսոյ պատրիարքութիւնէ հրաժարականը: Թարութիւն Պատրիարք չէր տեսնուած ձեւվել փաշայի հետ վերջին դէպքերէն ի վեր, որով բարկութեամբ հրաժարական տուած ու մեկնած էր: Դեպի փաշայեան ըսած է, որ շարունակես Պոլսոյ Պատրիարք մնալ, բայց քանի որ կուղես Երուսաղէմ երթալ, կը ջանամ և կաշխատեմ, որ կայսրը ընդունի Պոլսոյ պատրիարքութիւնէ հրաժարականը և վաւերացնէ Երուսաղէմայ պատրիարքութիւնը: Պատրիարքն յայտնած է թէ ինքն հիւանդ է, կարող չէ մինչև իսկ Երուսաղէմի Պատրիարք լինել, բայց այնտեղ գործերը քիչ են, պիտի երթայ այնտեղ անցուցանել կեանքն՝ աղօթելով կայսրի կենաց համար»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Համեմատելով այն բոլոր լուրերը, որոնք ստացվում են Ֆրիգրիկա կայսրի առողջութեան մասին, երևում է, որ կայսրը իրան համեմատաբար աւելի լաւ է գտնում, և հիւանդութիւնը կորցնում է իր վատնաւոր կերպարանը:

—Թիւրքիայի և Բուսնաստանի մէջ ծագած տարածայնութիւնները, ինչպէս համոզված են Վիեննայի զիպոմատական շրջաններում, շուտով կը վերջանան, և երկու պետութիւնների յարաբերութիւնները թշնամական կերպարանք չեն ունենայ:

—Վիեննայում լուրեր են տարածված, որ Անգլիական կառավարութիւնը վճռել է, որքան կարելի է մեծ դեր կատարել բալկանեան թերակղզու վրա, և այդ պատճառով անգլիական կառավարութեան գործակալները սկսել են եռանդուն կերպով գործել Բալկանի վրա:

—Խոսելով քաղաքական հարցերի մասին, «Nord» լրագիրը այն միտքն է յայտնում, որ մինչև Բուլղարական հարցը չի վճռվի օրինական կարգով, զանազան տեսակ անկարգութիւնների և պատահարների համար դռները միշտ բաց կը լինեն:

—Վատիկանի և անգլիական կառավարութեան յարաբերութիւնները լաւանում են, անգլիական կառավարութիւնը ուղղում է օգուտը պապից՝ իրանդական հարցի համար: Վատիկանում համոզված են, որ իրանդացիները անպայման կնկնթարկվեն պապի վճիռներին:

—Վիեննայում լուրեր են տարածվել, որ իբրեւ թէ Վիկտորիա թագուհու Բելիին դաւուց յետոյ, իշխան Բիւմարիի քաղաքական արթողմաների մէջ մի քանի փոփոխութիւններ են եղել, որոնք օգտակար չեն ռուսաց կառավարութեան համար:

—«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ Բէլգրադից, որ նախկին միլիտար նախագահ Գրուիչ հրաժարեցրած է իր պաշտօնից, որովհետեւ շարունակում էր պնդել իր արած յայտնութեան վրա, թէ աւստրիական զենայանք բացարձակապէս ձգտում էր վայր գցել արմատական միլիտարութիւնը: Պաշտօնից հրաժարեցրած է նոյնպէս զենաբալ Լէշանին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 ասպիւլի «Красс» լրագիրը հաղորդում է, որ ասպիւլի 11-ին հաստատված է լեհական թագաւորութեան մէջ հիմնվելի գիւղական բանկի կանոնադրութիւնը: Փոխառութիւն կարող են անել ռուս, լեհացի և լիտուացի ծագում ունեցող անձինք, որոնք իրաւունք ունեն ձեռք բերել 1864 թ-ի ուկրաին համապատասխանող հողեր:

ԿՕԿԱՆԻ, 30 ասպիւլի «Ն. Կուրիլի և ընկ.» բամբակի ցանքերը Ֆերգանեան շրջանում սկսված են մարտի 26-ից և աւարտվեցան ասպիւլի 25-ին: Բամբակի բոյսերը գեղեցիկ կերպով կանաչել են: ԲԻՕ-ԺԱՆՅՈՒՆ, 30 ասպիւլի: Պատգամաւորները ժողովը վճռեց անյապաղ ոչնչացնել ճորտութիւնը անպայման:

ՓԱՐԻՉ, 30 ասպիւլի: Բուլանթէ այսօր ուղևոր-

վեց պատգամաւոր լազերերի, կոմս Դիլօնի և «Լանտէնի» զլխատոր խմբագիր Մաէրի ուղեկցութեամբ, նրանք կը հասնեն Գիւն-Կիւրիսէն կէսօրից յետոյ ժամը 1-ին և 30 րոպէին Բուլանժէի ճանապարհ ընկնելու առիթով կայարանում հաւաքված էին 200 հոգի, որոնց միջից լավեցան «կեցցէ Բուլանժէ» բացականչութիւնները, առանձին պատահարներ տեղի չունեցան:

Միւս, 30 ապրիլի Բրազիլիայի կայսրը երէկ ուղեղի բորբոքման մի բանի ծանր նշաններ ցոյց տուցին:

Վիէննա 30 ապրիլի կոմս Տաաֆէ յայտնեց պարլամենտական մեծամասնութեան պարագլուխներին, որ այն դէպքում, երբ ընկալատուր կը մերժի սպիրտի տուրքի նախագիծը, ամբողջ մի-նիստութիւնը անպատճառ հրաժարական կը տայ:

Պետերբուրգ, 30 ապրիլի: Այսօր տօնովում է Մայիօվի բանաստեղծական գործունէութեան յիսնամակը: Լուրերին նայելով, Մայիօվին տուած է տայնի սովետիկի աստիճան: Այս տարի կրանսօէ-Սելօյի մօտ կը լինի մեծ զօրահանդէս. այդ ժամանակ կը դան և օտարերկրացի յատուկ պատգամաւորութիւններ: Ֆինանսների միւնիստրութեան մէջ հաշուող կոմս Գօլնիշչէ-Կուտուզով նշանակված է ազնականների բանկի կառավարչի օգնական:

ԼՕՆԴՈՆ, 30 ապրիլի: Երէկ, համայնների ժողովում, ծովագետութեան առաջին անգամը հերքեց Անգլիայում տարածված յուզիչ լուրերը, որոնք վերաբերում են ռուսաց և անգլիական նաւատորմի համամատական ուժին խաղաղ ուղիքանոսում: Նա յայտնեց, որ Ռուսաստանը պահում է խաղաղ ուղիքանոսում ոչ թէ 4 զրահակիր նաւ և 10 կրէյսեր, այլ միայն 1 զրահակիր և 5 կրէյսեր: Առհասարակ ռուսաց նաւատորմը խաղաղ ուղիքանոսում աւելի թոյլ է քան թէ անգլիացոց չինական ջրերում դանվող մի նաւախումբը, իսկ խաղաղ ուղիքանոսում Անգլիան ունի երկու նաւախումբ: Լորդերի ժողովում, զլխատոր հրամանատար, Կէմբրիջի զօրքը, այն համոզմունքը յայտնեց, որ Անգլիային ոչ մի անմիջական վտանգ չէ ըսպառնում: Սալըբորի յայտնեց, որ կառավարութիւնը պարտաւոր է պահպանել վերին աստիճանի դադախապահութիւն զօրաբանակի և նաւատորմի վերաբերեալ յայտնութիւններին մէջ. թէ և Եւրոպայի այժմեան զրոյթեան ժամանակ անգործ մնալն էլ վտանգաւոր է: Առաջին միւնիստրը յայտնեց, որ 1884 թւին զօրաբանակը բաղկացած էր 182,000 մարդուց, իսկ այժմ բաղկացած է 212,000 մարդուց. 1884 թւին նաւատորմի վրա ծախս է եղել 4 1/2 միլիոն ֆունտ ստերլինգ, իսկ այժմ 6 1/2 միլիոն:

Վիէննա, 30 ապրիլի: Երէկ Մեծ Խշխանուհի Մարիա Պաւլովնա նախաճաշեց ռուսաց դեսպանատանը, իսկ կէսօրին ուղեւորվեց Պետերբուրգ: Վիէննա եկաւ սերբիացոց թագուհին, որը Բէլգրադ է դնում: Կայսրը, կոմս Կալնսկի և ռուսաց դեսպանը թագուհուն այցելութիւն արեցին:

Պետերբուրգ, 30 ապրիլի: Բանաստեղծ Մայիօվին նրա յիսնամակի պատճառով շնորհված է տայնի սովետիկի աստիճան և նշանակված է նրան թոշակ՝ տարեկան 3,500 ռուբլի: Յօդուարին տնտեսաբանութեանը, որը տեղի ունեցաւ գրական-գրամատիկական ընկերութեան զանգումում, ներկայացաւ 22 պատգամաւորութիւն. կարողացին չնորհաւորական շատ հեռագիրներ, Մեծ-Խշխան կօնստանտին կօնստանտինովիչի օտանաւորը, Չէրսօֆօրիայի իշխանի, իշխան և իշխանուհի Կարագեօրգէվիչի, դեսպան Նէլիզովի և փարիզի մամուլի հեռագիրները, յօդուարը կարողաց իր «Բերինգիլա» պօսեման:

Լիւվ, 30 ապրիլի: Բուլանժէ հասաւ այստեղ այսօր՝ հանդիպելով աղմկալից ցոյցերի: Նրան թշնամական ցոյցեր անելու մտադրութիւնը չաջողվեց:

Պետերբուրգ, 1 մայիսի: «Пчела» թերթի հատով ծախելը նորից թոյլատրված է:

Հոս, 1 մայիսի: Պատգամաւորների ժողովը ձայների ահազին մեծամասնութեամբ մերժեց այն առաջարկը, որով առաջարկվում էր յետ կանչել Աֆրիկայից զօրքը և վստահութիւն յայտնեց մի-նիստութեան: Կրիսպի յայտնեց, որ իտալիան վճռել է սեփականացնել Մասսովան, բայց ձգտում է վերականգնել իր բարեկամական յարաբերութիւնները Արիսինայի հետ, որը ցանկանում են նոյնպէս և Նեդուար ու Անգլիան: Միւնիստր-նախագահը նոյնպէս խօսեց յօգուտ իտալիայի դադ-թական քաղաքականութեան զարգացման:

Փարիզ, 1 մայիսի: Բուլանժէ Բուլում մի ճառասեց, որի մէջ նորից պնդում էր թէ անհրաժեշտ է վերաքննել այժմեան սահմանադրութիւնը, որը նա անուանեց մի խառնուրդ կեղծ-միապետութեան և սուտ-հանրապետութեան, այլ և պնդեց մի այնպիսի հանրապետութեան հաստատութեան վրա, որը հիմնված լինէր ռազմագետական սկզբունքների վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ	
Ապրիլի 29-ին	
ԼՕՆԴՈՆԻ վրա 10 ֆունտ արծէ.	121 ր. — >
Համբուրգի վրա 100 մարկ —	59 > 40 >
Փարիզի վրա 100 ֆրանկ —	47 > 75 >
Ոսկի — արծէ.	9 > 65 >
Մաքաւայի կուպոններ —	192 > 50 >
Արծաթ —	1 > 41 >
Բորսայի դիսկոնտներ —	5 3/8% 70% >
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի 99 > 25 >	
— — — — — 2-րդ —	98 > 62 >
— — — — — 3-րդ —	98 > 50 >
— — — — — 4-րդ —	98 > 50 >
— — — — — 5-րդ —	98 > 62 >
— — — — — 6-րդ —	— > — >
Նո 4% փոխառութիւն	83 > — >
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ. 99 > 25 >	
— — — — — 2-րդ —	98 > 50 >
— — — — — 3-րդ —	98 > 62 >
Ներքին 5% առաջին փոխառութիւն.	270 > — >
— — — — — Երկրորդ —	244 > 25 >
5 1/2% ընդհան.	103 > — >
Ոսկեայ ընդհան.	200 > 75 >
Եթեթրոք կօնսոլիդաց. փոխառութիւն.	171 > 25 >
Նոր երկաթուղային ընդհան.	98 > 75 >
5% զրաւական թղթերի կալուած.	— > — >
— — — — — փոխ. կրեդ. ընկ.	169 > 75 >
— — — — — Գրաւ. թղթ. Աշու. բանկի	97 > 50 >
5 1/2% զրաւական թղթերի խնդրանքի կալուած բանկի.	99 > 50 >
6% զրաւակ. թղթ. խաղաղ. կալ. բան.	100 > 75 >
— — — — — Պոլսական —	101 > — >
— — — — — Պետ. Տուրք. —	101 > — >
— — — — — Կիւնով —	101 > — >
— — — — — Մոսկովայի —	102 > — >
— — — — — Բեսարաբ. Տաւր. —	100 > 50 >
— — — — — Նիժ. Սամար. —	100 > 50 >
— — — — — Վիլնայի —	100 > 75 >
— — — — — Թիֆլիսի — 27 և 43 տ. 98 > 50 >	
— — — — — Գուլիստի-18 և 43 տ. 98 > 50 >	
Վ. օլժակ-Կամսկի բանկի ակցիաները 711 > — >	
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 273 > — >	
Բիբինսկ-Վ. օլժակ ընկ.	89 > 50 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդի-գաջիաներ.	95 > 37 >
Մոսկովայի քաղաք. օրդիգաջիաներ.	94 > 50 >
Օրդիայի —	95 > — >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. 83 > 50 >	
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:	

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՆԻ

ԺԵՐԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒՑԱԿՏՈՒՐԱՅԻ ՊԱՇԵԱՏՈՒՄ
(Վարդապետ Բորոյ, նախկին Արծրունու դաշերէս), ստացված է ԲԱԹԱՆ սպիտակեղէնի համար, սովանի քաթան՝ 1 1/2, 2, 2 1/2 և 3 արշին լայնութեամբ: ՍԵՂԱՆԻ սպիտակեղէն, որ է՝ պարագայք 6, 12, 18, և 24 մարդու համար, ԱՆՁԵՆՈՑԻԿՆԵՐ, ԵՐԵՍՈՐԲԻՉՆԵՐ և ՍՓՈՌՏԵՐ՝ սպիտակ և գունաւոր:
ԱՄԱՌԱՅԻՆ ԿՏՈՐՆԵՐ՝ կանանց շորերի համար. միւրազոյն և սպիտակ ՐԱԳՕԴՆԵՐ և ՊԱՐՈՒՍԻՆ կիտիների համար, կանանց և տղամարդկանց ամեն տեսակի գուլպաներ ԿԱՀԱՐԱՍԻՔԻ ԿՏՈՐՆԵՐ և ՎԱՐԱԳՈՐՆԵՐ (Tulle Nottingham).
1—5
ԴՕՆՆԵՐ ԵՒ ԼԵՅՏ

CAFFÉ MAENDEL
WIEN, Rothenthurmstrasse
Այդ կաֆեն Վիէննայում բնակվող թէ հայերի և թէ արեւելից եկած ուրիշ ազգերի ներկայացուցիչների հաւաքակու տեղն է:
Zeitungen in allen Sprachen, auch armenische Zeitungen, u. a. „MSCHAK“ und „AREVELK“.
Այդ կաֆենում ստացվում են հայոց լրագիրներ „ՄՇԱԿ“ և „ԱՐԵՎԵԼԿ“
3—4 (b)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՅԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԱՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 6/18 մայիսի ԲԱԹՈՒՄԻՑ զուրա կը գնայ շոգեհաւ MENDOZA (ՄԵՆԴՈՉԱ) նաւապետ REYNIER (ՐԵՆԻԵ) մոնեյով Կ. Պօլիս, Զմիռնիա և Սիրա:
Ազնաները՝ ԲԱԹՈՒՄԻՄ Կ. Գ. ԷՍՏԵՆՔԻՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՆՈՐ ԶԵՋՈՒԲԵԱՆ ԶԵՋՈՒԲԵԱՆՑ:
2—2

ԴԵՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԵՐԵԼԻ
Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ
Միջին-Փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ) Երեւանեան հրապարակեց, Նարմանովի տանը ԲԱՅՎԱԾ Ե ԵՐԿՐՈՐԴ ՊԱՇԵԱՏ ԿԵՐՕՍԻՆԸ ՄԱՍ ՄԱՍ ԾԱԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՐ ստացած կերութիւնը տարբերվում է իր յատկութեամբ Թիֆլիսում մաս մաս ծախվող կերութիւնից: Նա հոտ չունի և կատարելագույն անվտանգ է:
ԳՆԵՐԸ ԶԱՓԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄԱՑ ԲԱԳՈՒՎԱԶՈՒՆՑԻ ԳՆԵՐԻՆ:
Ծառաների կողմից խաբեայութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ դալիս է կերութիւն առնելու, տրվում է մի ՄԱՐԿԱ „E. A. Пятровъ. Керосинъ“ գրուեալամբ:
Առաջին պահանջարկ. ՎՐՈՐՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՏ, Պալլովսկու բժշկարանի կողքին: Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերութիւն ստանալ առանձին զրքոյով և վճարել ամսէ ամիս:
10—25 (Ե. Ե.)

ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՐՈՒՅՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ՋՐԵՐԻ
Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ
ԲԱԹՈՒՄՈՒՄ
(Ցերկովնայա փողոցում, Կօնստանտինովի տան կից, որտեղ դեղատեղում է ԼՕՐԿՕ և ընկ. տպարանը):

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱՅԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:
Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՆՑԻ մի ՊՐՈՎԻԶՕՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենամոր ձկն մեքենաներ, նոյնպէս և ԶԻՎԻՆԻ հուշակաւոր ՖԻԼՏՐ, որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղբից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:
Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Դնորսով այն օժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէլմեան, մրջային և գաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲՅՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ ՎԻՇԻ, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, Լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կոնսունքին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հուշակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ամբողջութեամբ դաղերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժիկ դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:
Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործն ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:
Տարածախնութիւններից խուսափելու համար, խոստարարաւ խնդրում եմ իմ ջրերի գործածողերին պահանջել որ իմ բոլոր արգիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ 17—50 (b)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր
BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Հինգշաբթի, մայիսի 12-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգեհաւը, նաւապետ ԳԱՐԻԳԻ (GARRIGUES) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում Լէմբոյլուի տան, Նարբէժժնայա, և Թիֆլիսում՝ Նախկին Արծրունի գալլերէում, № 103.
2—4